ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1413 26.05.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏՈՒ № 2145
«27» 05 2014թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի մայիս ամսին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Մեղրիի ՀՊՎ և ընդհանուր ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել էր.

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՄՏՈՒ № 4134
«27» 05 2014թ.

Թերություններ՝

Ընդհանուր ՀՊՎ-ի խցերը գտնվում էին փոշոտ վիճակում, քննչական սենյակի երկու աթոռները արդեն մի քանի այցելություն է, ինչ արձանագրվում է, որ պոկված էին հատակից:

Խախտումներ՝

1. Հայկ Միլիտոսի Ծատրյանի վերաբերյալ բոլոր գործողությունները՝ ձերբակալելու և ՀՊՎ ընդունելու մասին, կրում են ձևական բնույթ:

Հ. Ծատրյանը ոստիկանության բաժին ինքնակամ ներկայացել է 03.04.2014թ-ին ժամը 15.00-ին /*փաստը հաստատող լուսանկար – 1/:* Միաժամանակ խնդրում ենք ուշադրություն դարձնել կազմված արձանագրության բովանդակությանը և տալ մեկնաբանություն, թե ինչ դեպքի մասին է խոսքը:

Հաջորդիվ, անձը ենթարկվել է խուզարկության, որի վերաբերյալ կազմվել է արձանագրություն, նույն օրը՝ ժամը 15.00-ից ժամը 15.20 ընկած ժամանակահատվածում / *փաստը հաստատող լուսանկար – 2/*:

Այս ամբողջի ուշագրավը այն է, որ տվյալ անձը ըստ ձերբակալման արձանագրության՝ քննիչի կողմից ձերբակալվել է նույն օրը՝ ժամը 15.10-ին, երբ իրեն խուզարության էին ենթարկում հերթապահ մասում /*փաստը հաստատող լուսանկար – 3/:*

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի՝ Հ. Ծատրյանը ազատ է արձակվել ՍԴ/0025/06/14 որոշման համաձայն դատարանի դահլիճից՝ դատավոր Ա. Թամանյանի կողմից 06.04.2014թ-ին ժամը 14.30-ին /*փաստը հաստատող լուսանկար – 4/:*

Ա. Ծատրյանը տեղափոխվել էր դատարան կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելու նպատակով, բայց դատավորը խափանման միջոց կալանքը մերժել է և ազատ արձակման վերաբերյալ ոչ մի որոշում չի կայացրել /*փաստը հաստատող լուսանկար –5/,* իսկ քննիչի կողմից ազատ արձակման որոշում այդպես էլ չի ներկայացվել ՁՊՎ:

2. Մինչ այցելության օրը ՁՊՎ-ում պահվել են երկու անձ, որոնց հարազատներին հեռախոսազանգի միջոցով իրազեկում չի կատարվել նրանց տեղաշարժի վերաբերյալ:
3. Հարկ ենք համարում տեղեկացնել, որ ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Գորիսի բաժնի ՁՊվ-ում ուսումնասիրություններ կատարելով արձանագրվել էր, որ Ռոբերտ Սամվելի Մակինյանը, Միսակ Պետրոսի Սարգսյանը և Կարապետ Մերուժանի Մարտիրոսյանը 21.04.2014թ-ին ժամը 21.40-ին գողություն կատարելու կասկածանքով բերման են ենթարկվել Գորիսի բաժին, որից հետո 2 ժամ 40 րոպե անց՝ 22.04.2014թ-ին ժամը 00.20-ին փոխանցվել են ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Մեղրիի բաժնի աշխատակիցներին՝ Մեղրիի բաժին տեղափոխվելու նպատակով: Դիտորդական խմբի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Մեղրիի ոստիկանության բաժին նման անուն ազգանուններով անձիք ոչ ընդունվել են, և ոչ էլ ձերբակալվել են:

Ավելացնենք, որ ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործի թիվ ԵԱԴԴ/00850609 18.12.2009թ-ի որոշման 28-րդ կետի . մեջբերում ենք <<... *Եթե քրեական հետապնդման մարմին բերելուց 4 ժամ հետո ազատությունից զրկված անձին ձերբակալման արձանագրությունը չի հայտարարվի, ապա անձը օրենքի ուժով պետք է համարվի ձերբակալված և իրավունք ունենա օգտվել ձերբակալվածի համար օրենքով սահմանված երաշխիքներից, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով ամրագրված 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չկալանավորվելու դեպքում անհապաղ ազատ արձակվելու իրավունքից*>>: Արդյունքում՝ նշված անձիք 2 ժամ 40 րոպե պահվել են Գորիսի բաժնում, մինչ Մեղրիի բաժնի աշխատակիցներին փոխանվելը, որից հետո տեղափոխվել են Մեղրիի բաժին, որը նվազագույնը կարող էր տնել 2 ժամ 30 րոպե և մինչ Մեղրիի բաժին տեղափոխվելը, անձիք ձերբակալվածի կարգավիճակ են ստացել:

Սակայն, նրանց ձերբակալելու, ՁՊՎ ընդունելու և ազատ արձակելու մասին ոչ մի գործողություն կատարված չէ:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Խնդրում ենք յուրաքանչյուր ՀՊՎ-ին վերաբերող գրությունը չմիավորել մեկ գրության մեջ այլ տալ առանձին- առանձին մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-1543 «26» 06 2014թ.

Ձեր 26.05.2014թ. թիվ 2621/1413 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2014թ. մայիս ամսին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Մեղրիի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Սյունիքի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի կապակցությամբ տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

ՁՊՎ-ի խցերը և մյուս բոլոր սենյակները ամեն օր մաքրվում և ախտահանվում են, իսկ քննչական սենյակի աթոռները ամրացված են հատակին պտուտակագամերով, որոնք ոչ թե պոկված են, եղել այլ փոքր ինչ թուլացած: Նշված թերությունը վերացվել է:

Խախտումներ.

1. Հայկ Միլիտոսի Ծատրյանը 03.04.2014թ. ինքնակամ ներկայացել է ոստիկանության Մեղրիի բաժին, ինչի վերաբերյալ կազմվել է արձանագրություն <<Բաժին ինքնակամ ներկայանալու վերաբերյալ>>, որում հակիրճ նշվել է <<ս/թ մարտի 29-ին տեղի ունեցած դեպքի կապակցությամբ...>>:

Հայտնվում է, որ անձանց ինքնակամ բաժին ներկայանալու, նրանց բերման ենթարկելու և այդ մասին կազմված արձանագրությունների բովանդակության վերաբերյալ դիտորդների խմբին ոստիկանության կողմից մեկնաբանություններ տալը <<ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը հաստատելու մասին>> ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ. թիվ 1-Ն հրամանով նախատեսված չէ: Համաձայն 1-Ն հրամանի 1-ին կետի՝ ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խումբը ոստիկանությունում **ձերբակալավածներին պահելու վայրերում** պահվող անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդիրներով զբաղվող, հասարակական վերահսկողություն իրականացնող մարմին է: Ավելացնենք նաև, որ անկախ այն հանգամանքից անձը ինքնակամ է ներկայացել բաժին, թե բերման է ենթարկվել, նրա ձերբակալումը կատարվում է ՀՀ քր. դատ. օր-ի 128 հոդվածի 3-րդ կետի պահանջների համաձայն:

Այս ամենից զատ նշենք, որ Հ.Ծատրյանի կողմից կատարված <<դեպքի>> հանցագործության վերաբերյալ հստակ նշված է նրա ձերբակալման արձանագրությունում, որը մեզ է տրամադրվել Ձեր իսկ կողմից:

Հ.Ծատրյանը 03.04.2014թ. ժամը 15.00-ին ներկայացել է ոստիկանության Մեղրիի բաժին և նույն ժամին բաժնի հերթապահ մասում՝ բաժնի ծառայողների կողմից ենթարկվել է անձնական խուզարկության, որը տևել է 20 րոպե: Խուզարկությանը զուգընթաց հերթապահ մասում քննիչի կողմից ժամը 15.10-ին կազմվել է ձերբակալման արձանագրություն: Խուզարկության և ձերբակալման վերաբերյալ կազմված արձանագրությունների որոշակի ժամանակահատվածների համընկնումը պայմանավորված է նրանով, որ այդ գործողությունները կատարվել են քննիչի և բաժնի ծառայողների կողմից միաժամանակ, ինչն որևէ իրավական ակտի պահանջների կամ ձերբակալվածի իրավունքների խախտում չի հանդիսանում:

Հ.Ծատրյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հարցը 06.04.2014թ. մերժվել է դատարանի կողմից և Հ.Ծատրյանը դատարանի դահլիճից ազատ է արձակվել: Նույն օրը քննիչի կողմից կայացվել է <<Ձերբակալվածին արգելանքից ազատելու մասին>> որոշում, որի մեկ օրինակը տրամադրվել է ոստիկանության Մեղրիի բաժնին: Նշված որոշումը բաժնի հերթապահ մասի պետը սխալմամբ դրել է մեկ այլ թղթապանակի մեջ, իսկ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում որպես ազատ արձակման հիմք սխալմամբ նշել է դատավորի կողմից կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մերժման որոշումը: Իր գործառութային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար հերթապահ մասի պետը խիստ նախազգուշացվել է, իսկ Հ.Ծատրյանին ազատ արձակելու որոշումը դրվել է անձնական գործի մեջ:

2. Համաձայն ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 11-րդ կետի՝ ձերբակալված և կալանավորված անձանց ՁՊՎ ընդունելու կամ մի հիմնարկից մյուսը տեղափոխելու մասին ՁՊՎ վարչակազմը կապի հնարավոր միջոցով տեղյակ է պահում վերջիններիս կողմից ընտրած անձին և այդ մասին կազմում տեղեկանք, որը դրվում է անձնական գործում: Մինչ դիտորդների այցելության օրը ՁՊՎ-ում պահվել են երկու անձինք, որոնցից մեկը Հ.Ծատրյանն է, որն ազատ է արձակվել, իսկ մյուսը՝ Ա.Գրիգորյանը իր անձնական գործով, որի մեջ դրված է եղել նրա տեղաշարժի մասին հեռախոսով հարազատներին իրազեկելու վերաբերյալ կազմված տեղեկանքը, տեղափոխվել է ՔԿՀ:

3. Ռ.Մակինյանը, Մ.Սարգսյանը և Կ.Մարտիրոսյանը ոստիկանության Գորիսի բաժին բերման են ենթարկվել 21.04.2014թ. ժամը 21.40-ին, որից հետո 2 ժամ 40 րոպե անց՝ 22.04.2014թ. ժամը 00.20-ին նշված անձինք փոխանցվել են Մեղրիի բաժնի ծառայողներին Մեղրիի բաժին տեղափոխելու համար: Սակայն Մեղրիի բաժնի ծառայողները վերջիններիս ոչ թե տեղափոխել են Մեղրիի բաժին, այլ նրանց հետ իրականացրել են բացատրական աշխատանքներ, ինչի արդյունքում բերման ենթարկվածները իրենց ավտոմեքենայով ինքնակամ ներկայացել են Սյունիքի մարզի քննչական բաժնի Մեղրիի քննչական խմբի քննիչին: Քննիչի կողմից նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել՝ ստորագրություն չհեռանալու մասին և ազատ արձակել: Քանի որ վերը նշված անձինք ոստիկանության Մեղրիի բաժին չեն տարվել այդ իսկ պատճառով էլ բաժնի հերթապահ մասի գրանցամատյաններում նրանց վերաբերյալ գրառումներ կատարված չեն: Բացի այդ հարկ է ևս մեկ անգամ հիշեցնել, որ <<ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը հաստատելու

մասին>> ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ. թիվ 1-Ն հրամանի համաձայն՝ դիտորդական խմբի նպատակներն են ՁՊՎ-ում պահվող անձանց իրավունքների պաշտպանության հասարակական վերահսկողությունը, նրանց կենցաղային պայմանների բարելավումը, իսկ ոստիկանության բաժիններ անձանց բերման ենթարկելու հետ կապված գործողությունները դուրս են դիտորդների խմբի իրավասություններից:

ՀՀ ոստիկանության շտաբ